ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

<<ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> (**Պ-608-31.05.2023-ԱռՀ-011/0**) և <<ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> (*Պ-608[1]-31.05.2023-ԱռՀ-011/0*)*ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ* **ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ** ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
ՀՀ կառավարություն	<<ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> (**Պ-608-31.05.2023-ԱռՀ-011/0**) *ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ*	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվող կարգավորումներն առաջարկվում է նախատեսել առանձին հոդվածի տեսքով, որտեղ կամրագրվեն բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում տեսալուսանկարահանող սարքեր օգտագործելու նպատակները, այն վայրերը, որտեղ տեսալուսանկարահանող սարքերի օգտագործումն արգելված է:	Ընդունվել է: Նախագծով առաջարկվող կարգավորումները նախատեսվել են առանձին՝ 7 1-ին հոդվածի տեսքով, որտեղ ամրագրվել են բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում տեսալուսանկարահանող սարքեր օգտագործելու նպատակները, այն վայրերը, որտեղ տեսալուսանկարահանող սարքերի օգտագործումն արգելված է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	<<ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> (**Պ-608-**	Վերախմբագրել նախագծով լրացվող 7 1-րդ հոդվածի 3-րդ մասը, որով սահմանված է, որ տեսալուսանկարահանող սարքեր օգտագործելու դեպքում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող	Ընդունվել է: Նախագծով լրացվող 7 1-րդ հոդվածի 3-րդ մասը լրացվել է <<իրենց կազմակերպության	Ընդունվել է:

	31.05.2023-ԱՌՀ-011/0) *ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ*	կազմակերպությունները տեսանելի վայրում տեղադրում են համապատասխան նախազգուշական նշան:	տարածքի տեսանելի հատվածներում>> բառերով: <<Համապատասխան նախազգուշական նշան>> բառերը փոխարինվել են <<իրազեկման ցուցանակներ>> բառերով:	
ՀՀ կառավարություն	<<ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> (**Պ-608-31.05.2023-ԱՌՀ-011/0**) *ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ*	Նախագծով լրացվող 7 1-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է, որ տեսալուսանկարահանող սարքերի օգտագործմամբ ստացված տվյալները կարող են պահպանվել, եթե դրանք հետապնդում են նույն հոդվածի 1-ին մասով ամրագրված նպատակները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված տվյալները հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ են՝ առաջարկվում է սահմանել կարգ այդ տվյալները պահպանելու վերաբերյալ:	Ընդունվել է: Նախագծով լրացվող 7 1-րդ հոդվածի 4-րդ մասը լրացվել է <<սույն հոդվածի 1-ին մասում նշված կառավարության սահմանած կարգին համապատասխան>> բառերով, սահմանելով, որ տեսալուսանկարահանող սարքերի օգտագործմամբ ստացված տվյալները կարող են պահպանվել կառավարության սահմանած կարգով:	Ընդունվել է:

.